

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ուկրաինայի կառավարության միջև Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ուկրաինայի կառավարությունը,

ցանկանալով կնքել Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ Համաձայնագիր և հաստատելով իրենց ձգտումը փոխադարձ տնտեսական հարաբերությունները զարգացնելու և խորացնելու գործում,

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Անձինք, ում նկատմամբ կիրառվում է Համաձայնագիրը

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Հոդված 2

Հարկեր, որոնց վրա տարածվում է Համաձայնագիրը

1. Սույն Համաձայնագիրը տարածվում է Եկամուտների և գույքային հարկերի վրա, որոնք գանձվում են Պայմանավորվող պետության, նրա վարչատարածքային ստորաբաժանման կամ տեղական իշխանությունների անունից՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտներից և գույքից գանձվող հարկեր են համարվուն Եկամուտների ընդհանուր գումարից և գույքի ընդհանուր արժեքից կամ դրանց առանձին տարրերից, այդ թվում՝ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած Եկամուտներից գանձվող և ձեռնարկության վճարած աշխատավարձի ընդհանուր գումարից գանձվող հարկերը:

3. Սույն Համաձայնագիրը տարածվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի վրա՝

ա) Հայաստանում՝

ի) շահութահարկ,

ii) ֆիզիկական անձանցից Եկամուտահարկ,

iii) գույքահարկ, և

iv) հողի հարկ,
(այսուհետ՝ հայկական հարկ)

բ) Ուկրաինայում՝

- I) ձեռնարկությունների շահութահարկ,
 - II) եկամտահարկ քաղաքացիներից,
 - III) ձեռնարկությունների գույքահարկ,
 - IV) քաղաքացիների անշարժ գույքի հարկ,
- (այսուհետև՝ ուկրաինական հարկ):

4. Սույն Համաձայնագիրը տարածվում է նաև ցանկացած նույնական կամ բնույթով համանման հարկերի վրա, որոնք կգանձվեն Պայմանավորվող պետություններից մեկի կողմից՝ սույն Համաձայնագրի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ որանց փոխարեն:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները միմյանց ժամանակին կծանուցեն հարկմանը վերաբերող իրենց օրենսդրությունում կատարված որևէ էական փոփոխության մասին:

Հոդված 3 Ընդհանուր սահմանումներ

1. Սույն Համաձայնագրի ըմբռնման իմաստով, եթե այլ բան չի բխում ենթատեքստից՝

ա) «Պայմանավորվող պետություն» տերմինը, ենթատեքստից կախված, նշանակում է Հայաստան կամ Ուկրաինա,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և աշխարհագրական իմաստով օգտագործելիս նշանակում է Հայաստանի Հանրապետության տարածք, ներառյալ ներքին ջրերը, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունը, միջազգային իրավունքի նորմերին և ներքին օրենսդրությանը համապատասխան, ինքնիշխան իրավունքներ և իրավագորություն է իրականացնում,

գ) «Ուկրաինա» տերմինը, երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է՝ Ուկրաինայի տարածքը, նրա մայրցամաքային ելուստը և նրա բացառիկ (ծովային) տնտեսական գոտին, ինչպես նաև Ուկրաինայի տարածքային ջրերի սահմաններից դուրս գտնվող որևէ այլ տարածք, որը, միջազգային իրավունքին համապատասխան, սահմանվում է կամ հետագայում կարող է սահմանվել որպես տարածք, որի սահմաններում կարող են կիրառվել Ուկրաինայի իրավունքները ծովի հատակի, ընդերքի և դրա բնական պաշարների նկատմամբ,

դ) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց յուրաքանչյուր այլ միավորում,

Ե) «ընկերակցություն» տերմինը նշանակում է որևէ կորպորատիվ կազմավորում կամ ցանկացած այլ կազմակերպություն, որը հարկման նպատակների համար դիտարկվում է որպես կորպորատիվ կազմավորում,

գ) «մի Պայմանավորվող պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, մի Պայմանավորվող պետության ռեգիլենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն կամ մյուս Պայմանավորվող պետության ռեգիլենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

է) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է Պայմանավորվող պետության ռեգիլենտի կողմից շահագործվող ծովային և գետային նավով կամ օդանավով, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցով ցանկացած փոխադրում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի նավերը կամ փոխադրամիջոցները շահագործվում են բացառապես մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող կետերի միջև,

ը) «ազգային անձ» տերմինը նշանակում է՝

ի) Պայմանավորվող պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) Պայմանավորվող պետության գործող օրենսդրությամբ իր կարգավիճակը որպես այդպիսին ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն, գործընկերություն կամ միություն (ասոցիացիա),

թ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է՝ Ուկրաինայի առնչությամբ՝ Ուկրաինայի ֆինանսների նախարարությունը կամ նրա լիազորած ներկայացուցիչը, և Հայաստանի առնչությամբ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը կամ նրա լիազորած ներկայացուցիչը:

2. Սույն Համաձայնագիրը Պայմանավորվող պետության կողմից կիրառվելիս Համաձայնագրում չսահմանված ցանկացած տերմին կունենա այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ պետության օրենսդրությամբ այն հարկերի կիրառման վերաբերյալ, որոնց վրա տարածվում է սույն Համաձայնագիրը, եթե ենթատեքստից այլ բան չի բխում, կամ, եթե Պայմանավորվող պետության իրավասու մարմինները ընդհանուր կարծիքի չգան, համաձայն սույն Համաձայնագրի 25-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգի:

Հոդված 4 Ռեգիլենտ

1. Սույն Համաձայնագիրը կիրառելիս «Պայմանավորվող պետության ռեգիլենտ» տերմինը նշանակում է անձ, որն այդ

Պետության օրենսդրությամբ այնտեղ ենթակա է հարկման՝ բնակության վայրի, գրանցման վայրի, մշտական գտնվելու վայրի կամ այլ համանման չափանիշի հիման վրա: Այս տերմինը, միևնույն ժամանակ, չի ներառում այդ Պետությունում հարկման ենթակա անձին, եթե այդ անձը եկամուտներ է ստանում միայն այդ Պետության աղբյուրներից կամ այնտեղ գտնվող գույքի առնչությամբ:

2. Եթե, սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձը երկու Պայմանավորվող պետություններում էլ ռեգիդենտ է, ապա նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ՝

ա) նա համարվում է այն Պայմանավորվող պետության ռեգիդենտը, որտեղ ունի մշտական կացարան: Եթե նա երկու Պայմանավորվող պետություններում էլ ունի մշտական կացարան, ապա համարվում է այն Պայմանավորվող պետության ռեգիդենտը, որի հետ ունի առավել սերտ անձնական և տնտեսական կապեր (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պայմանավորվող պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն, կամ եթե նա Պայմանավորվող պետություններից և ոչ մեկում չունի մշտական կացարան, ապա նա համարվում է այն Պայմանավորվող պետության ռեգիդենտը, որտեղ նա սովորաբար բնակվում է,

գ) եթե անձը սովորաբար բնակվում է երկու Պայմանավորվող պետություններում էլ, կամ եթե նա դրանցից ոչ մեկում սովորաբար չի բնակվում, ապա նա համարվում է այն Պայմանավորվող պետության ռեգիդենտը, որի քաղաքացին է,

դ) եթե նա հանդիսանում է երկու Պայմանավորվող պետությունների քաղաքացի, կամ եթե չի հանդիսանում նրանցից ոչ մեկի քաղաքացին, ապա Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այդ հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:

3. Այն դեպքում, եթե, սույն հոդվածի 1-ին կետի դրույթների համաձայն, ֆիզիկական չհանդիսացող անձը Պայմանավորվող երկու պետությունների ռեգիդենտ է, ապա նա համարվում է այն Պետության ռեգիդենտը, որտեղ նա ստացել է իր կարգավիճակը որպես այդպիսին:

Հոդված 5 Մշտական ներկայացուցչություն

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական ներկայացուցչություն» տերմինը նշանակում է գործունեության մշտական վայր, որի միջոցով մի Պայմանավորվող պետության ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունը,

ամբողջությամբ կամ մասամբ, իրականացնում է մյուս Պայմանավորվող պետությունում:

2. «Մշտական ներկայացուցչություն» արտահայտությունը նաև նաև պետությունում է՝

- ա) դեկավարման վայր,
- բ) բաժանմունք,
- գ) գրասենյակ,
- դ) ֆաբրիկա,
- ե) արհեստանոց,

զ) հանքահող, նավթի կամ գազի հորատանցք, հանք կամ բնական պաշարների հետախուզման և(կամ) արդյունահանման ցանկացած այլ վայր,

է) ապրանքների վաճառքի համար օգտագործվող պահեստ կամ այլ շինություն:

3. Շինարարական հրապարակը, հավաքման կամ տեղակայման օբյեկտը, ինչպես նաև հիշատակված օբյեկտների հետ կապված վերահսկողական գործունեությունը մշտական ներկայացուցչություն կազմում են միայն այն դեպքում, եթե դրանք գոյություն ունեն տասներկու ամսից ավել:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ «մշտական ներկայացուցչություն» տերմինը չի ներառում՝

ա) շինությունների օգտագործումը բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահպանման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահպանման, ցուցադրման կամ առաքման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարի պահումը բացառապես այլ ձեռնարկության կողմից վերամշակման նպատակով,

դ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գննան կամ տեղեկության հավաքման նպատակով,

է) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի որևէ այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունության մշտական վայրի պահումը բացառապես «ա»-ից «ե» ենթակետերում թվարկված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում գործունեության մշտական վայրի ընդհանուր գործունեությունը պետք է կրի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

5. Զնայած սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերի դրույթներին, եթե ձեռնարկության անունից գործող անձը անկախ կարգավիճակով գործակալ չէ, որի մասին խոսվում է սույն հոդվածի 6-րդ կետում, ունի և սովորաբար օգտագործում է Պայմանավորվող պետությունում ձեռնարկության անունից գործադրներ (կոնտրակտներ) կնքելու իրավասություն կամ պահում է ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահում վաճառք, ապա այդ ձեռնարկությունը դիտարկվում է որպես այդ Պետությունում նշտական ներկայացուցչություն ունեցող՝ ցանկացած գործունեության առումով, որն այդ անձն իրականացնում է ձեռնարկության համար, բացառությամբ, եթե այդ անձի գործունեությունը սահմանափակվում է սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեսակներով, որը, եթե անզան իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով, գործունեության այդ մշտական վայրը չի վերածում մշտական ներկայացուցչության՝ համաձայն այդ կետի դրույթների:

6. Ձեռնարկությունը Պայմանավորվող պետությունում չի դիտարկվում որպես մշտական ներկայացուցչություն ունեցող, եթե միայն այն ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում միջնորդի (բրոքերի), կոմիսիոների կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց ձեռնարկատիրական գործունեության սովորական շրջանակներում:

7. Այն փաստը, որ Պայմանավորվող պետության ռեգիլենտ հանդիսացող ընկերակցությունը հսկում է մյուս Պայմանավորվող պետության ռեգիլենտ հանդիսացող ընկերակցությանը կամ հսկում է որա կողմից կամ այդ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ինքնըստինքյան այդ ընկերակցություններից մեկին չի վերածում մյուսի մշտական ներկայացուցչության:

Հոդված 6 Եկամուտներ անշարժ գույքից

1. Եկամուտները, որոնք մի Պայմանավորվող պետության ռեգիլենտը ստանում է մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից (այդ թվում՝ Եկամուտները գյուղացիական կամ անտառային տնտեսություններից), կարող են հարկվել այդ մյուս պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինը պետք է ունենա այն նշանակությունը, որն այն ունի այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է հիշատակված գույքը: Ծովային,

գետային նավերը կամ օդանավերը, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. Սույն հոդվածի առաջին կետի դրույթները կիրառվում են նաև անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալության տալուց կամ օգտագործման ցանկացած այլ ձևից ստացված եկամուտների նկատմամբ:

4. Եթե ընկերակցության բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների տնօրինումը այդպիսի բաժնետոմսերի կամ կորպորատիվ իրավունքների տիրոջը տալիս է ընկերության անշարժ գույքի օգտագործման իրավունք, ապա այդ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալման տալուց կամ այդպիսի օգտագործման իրավունքի ցանկացած այլ ձևի օգտագործումից առաջացած եկամուտները կարող են հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է անշարժ գույքը:

5. Սույն հոդվածի առաջին, երրորդ և չորրորդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից և անկախ անհատական ծառայություններ մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից եկամուտների նկատմամբ:

Հոդված 7

Շահույթ ձեռնարկատիրական գործունեությունից

1. Պայմանավորվող պետության ձեռնարկության շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում, եթե այդպիսի ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող պետությունում ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է այդ կերպ, ապա ձեռնարկության շահույթը հարկվում է մյուս Պետությունում, բայց միայն այն մասով, որը վերագրվում է այդ մշտական ներկայացուցչությանը:

2. Հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները, եթե Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության միջոցով, ապա Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրում այդպիսի մշտական ներկայացուցչությանը կհաշվանցվի շահույթ, որն այն կարող էր ստանալ, եթե լիներ առանձին և ինքնուրույն ձեռնարկություն՝ զբաղված նույնպիսի կամ ննանատիպ գործունեությամբ, նույնպիսի կամ նմանատիպ պայմաններում և գործեր ձեռնարկությունից լիովին անկախ, որի մշտական ներկայացուցչությունն է նա հանդիսանում:

3. Մշտական ներկայացուցչության շահույթը որոշելիս թույլատրվում է մշտական ներկայացուցչության նպատակների համար կատարված ծախսերի հանում, ներառյալ դեկավարման և ընդհանուր վարչական ծախսերը՝ կատարված, ընդհանուր առմամբ, ձեռնարկության նպատակների համար, ինչպես Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Ցանկացած դեպքում այդպիսի ծախսերը չպետք է ներառեն ցանկացած գումարներ, որոնք վճարվում են (այլ կերպ, քան իրոք կատարված ծախսերի հաստուցումը) մշտական ներկայացուցչության կողմից ձեռնարկությանը կամ դրա մյուս ստորաբաժանմանը որպես ռոյալի, հոնորար կամ այլ նմանատիպ վճարումներ արտոնագրերի կամ ուրիշ իրավունքների օգտագործման համար, կամ որպես կոմիսիոն վարձատրություն կառավարման կամ տրամադրած հատուկ ծառայությունների համար, կամ, բացառությամբ բանկերի, որպես տոկոսներ մշտական ներկայացուցչությանը ձեռնարկության կողմից տրամադրված փոխառության դիմաց:

4. Եթե Պայմանավորվող պետությունում մշտական ներկայացուցչությանը վերաբերող շահույթը որոշվում է ձեռնարկության տարբեր ստորաբաժանումների միջև շահույթի ընդհանուր գումարի համաչափ բաշխման հիման վրա, ինչը սովորական պրակտիկա է հանդիսանում, ապա սույն հոդվածի 2-րդ կետի դրույթները խոչընդոտ չեն հանդիսանա այդ Պայմանավորվող պետության համար՝ որոշելու հարկվող շահույթը այդպիսի բաշխման միջոցով, ինչպես ընդունված է. բաշխման ընտրված ձևի արդյունքները պետք է արդյունքներ տան սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին համապատասխան:

5. Ոչ մի շահույթ չի վերագրվում մշտական ներկայացուցչությանը այդ մշտական ներկայացուցչության կողմից ձեռնարկության համար միայն ապրանքների կամ արտադրանքի գնման հիման վրա:

6. Նախորդ կետերի նպատակների համար մշտական ներկայացուցչությանը վերագրվող շահույթը կորոշվի ամեն տարի միևնույն եղանակով, բացառությամբ եթե այն փոխելու համար կան բավարար ու ծանրակշիռ պատճառներ:

7. Եթե շահույթը ներառում է եկամտի այնպիսի տեսակներ, որոնց նասին առանձնահատուկ նշվում է սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդի այդ հոդվածների դրույթների վրա:

Հոդված 8 Միջազգային փոխադրումներ

1. Պայմանավորվող պետության ռեգիստրացիայի միջազգային փոխադրումներում ծովային, գետային նավերի կամ օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից ստացած շահույթը հարկվում է միայն այդ Պայմանավորվող պետությունում:

2. Սույն հոդվածի նպատակների համար միջազգային փոխադրումներում ծովային նավերի և օդանավերի շահագործումից շահույթը ներառվում է՝

ա) Եկամուտ դատարկ ծովային նավերի կամ օդանավերի վարձակալությունից, և

բ) շահույթ ապրանքների և արտադրանքի փոխադրումների համար օգտագործվող բեռնարկերի (ներառյալ ավտոգնացքներն ու բեռնարկերի փոխադրման համար ուղեկցող սարքավորումները) օգտագործումից, պահումից կամ վարձակալությունից՝

որտեղ այդպիսի վարձակալությունը կամ օգտագործումը, պահումը կամ վարձակալությունը, դեպքից կախված, միջազգային փոխադրումներում ծովային նավերը և օդանավերը շահագործելու նկատմամբ հանդիսանում են կողմնակի:

3. Սույն հոդվածի 1ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև այդպիսի նավեր կամ փոխադրամիջոցներ շահագործող միջազգային կազմակերպությունում, համատեղ ձեռնարկությունում կամ պուլում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ:

Հոդված 9 Զուգորդված (ասոցացված) ձեռնարկություններ

1. Այն դեպքում, երբ՝

ա) մի Պայմանավորվող պետության ձեռնարկությունը ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում է մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալի մեջ, կամ

բ) միևնույն անձինք ուղղակի կամ անուղղակի կերպով մասնակցում են մի Պայմանավորվող պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալի մեջ, և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև՝ դրանց առևտրային և ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են այն պայմաններից, որոնք կարող են լինել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կարող էր հաշվանցվել դրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվանցվել, կարող է Պայմանավորվող պետության կողմից մտցվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:

2. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի կազմում մտցնում և, համապատասխանաբար, հարկում է մի շահույթ, որի նկատմամբ մյուս Պայմանավորվող պետության ձեռնարկությունը այդ մյուս Պետությունում հարկվում է, և այդ կերպ մտցված շահույթը կիաշվանցվեր առաջինը նշված Պետության ձեռնարկությունը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեն անկախ ձեռնարկությունները բնորոշող փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կկատարի այդ շահույթի հարկի համապատասխան շտկում: Այդպիսի շտկումը որոշելիս հաշվի կառնվեն սույն Համաձայնագրի մյուս դրույթները, իսկ Պայմանավորվող պետության իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կխորհրդակցեն մինյանց հետ:

Հոդված 10 Շահաբաժիններ

1. Շահաբաժինները, որոնք Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերակցությունը վճարում է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտին, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, ում ռեզիդենտն է համարվում շահաբաժիններ վճարող ընկերակցությունը, այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ստացողը շահաբաժինների փաստացի իրավունք ունի, ապա գանձվող հարկը չպետք է գերազանցի՝

ա) շահաբաժինների ընդհանուր գումարի 5%-ը, եթե ընկերակցությունը շահաբաժինների փաստացի իրավունք ունի, և այդ ընկերակցությունը տնօրինում է շահաբաժիններ վճարող ընկերակցության կանոնադիր ֆոնդի առնվազն 25%-ը,

բ) շահաբաժինների ընդհանուր գումարի 15%-ը՝ մնացած դեպքերում:

Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները այս սահմանափակումների կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործվելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից կամ այլ՝ շահույթին մասնակցության իրավունք տվող, պարտապահանջ չհանդիսացող, իրավունքներից, ինչպես նաև այլ կորպորատիվ իրավունքներից, որոնք ենթակա են նույնպիսի հարկման, ինչպես բաժնետոմսերից եկամուտը, այն Պետության հարկային օրենսդրության համաձայն, որի ռեզիդենտն է հանդիսանում շահույթի բաշխումն իրականացնող ընկերակցությունը:

4. Սույն հոդվածի առաջին և երկրորդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի իրավունքներ ունեցող անձը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեգիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, ում ռեգիդենտն է շահաբաժիններ վճարող ընկերակցությունը, այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող մշտական բազայից, և մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրոք վերաբերում է նման մշտական ներկայացուցչությանը կամ նման մշտական բազային: Այդ դեպքում, հանգանանքներից կախված, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

5. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող պետության ռեգիդենտ հանդիսացող ընկերակցությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, այդ մյուս Պետությունը կարող է այդ ընկերակցության վճարած շահաբաժիններից չգանձել որևէ հարկ, բացառությամբ եթե այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեգիդենտին, կամ եթե մասնակցությունը, որի կապակցությամբ վճարվում են շահաբաժինները, իրոք վերաբերում է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական ներկայացուցչությանը կամ մշտական բազային, և չբաշխված շահույթից հարկեր չեն գանձվում, եթե անգամ շահաբաժինները վճարվում են, կամ չբաշխված շահույթը լիովին կամ մասամբ կազմված է այդ մյուս Պետությունում կազմավորվող շահույթից կամ եկամտից:

Հոդված 11 Տոկոսներ

1. Մի Պայմանավորվող պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում, եթե այդպիսի ռեգիդենտը այդ տոկոսների փաստացի իրավունք ունի:

2. Սակայն նման տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող պետությունում, որտեղ դրանք առաջանում են և, այդ Պետության օրենսդրությանը համապատասխան. բայց եթե ստացողը տոկոսների փաստացի իրավունք ունի, ապա գանձվող հարկն այդ դեպքում չպետք է գերազանցի տոկոսների ընդհանուր գումարի 10%-ը:

Պայմանավորվող պետության իրավասու մարմինները սույն սահմանափակման կիրառման եղանակը կորոշեն փոխադարձ համաձայնությամբ:

3. Անկախ սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներից՝ մի Պայմանավորվող պետությունում առաջացած տոկոսները կազատվեն այդ պետությունում հարկումից, եթե՝

ա) այդ տոկոսների փաստացի իրավունք ունի մյուս Պայմանավորվող պետության կառավարությունը, կամ նրա վարչաքաղաքական ստորաբաժանումը, կամ իշխանության տեղական մարմինները, կամ այդ կառավարության, վարչաքաղաքական ստորաբաժանումների կամ իշխանության տեղական մարմինների ցանկացած այլ մարմին, կամ

բ) այդ տոկոսների փաստացի իրավունք ունեն Հայաստանի կենտրոնական բանկը կամ Ռուսականայի ազգային բանկը, կամ պետական արտահանման կամ ներմուծման վարկերի երաշխավորման կազմակերպությունները, կամ այլ կազմակերպություններ, որոնց համապատասխան Պայմանավորվող պետության օրենսդրության համաձայն, տրված են համապատասխան իրավունքներ:

4. «Տոկոսներ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործվելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջից, անկախ իշխորթեքային ապահովումից, պարտապահի՝ շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից և, մասնավորապես, եկամուտ կառավարական արժեթղթերից, փոխառության տոմսերից կամ պարտատոմսերից, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի պարզապեսավարներն ու շահումները:

5. Սույն հոդվածի առաջին և երկրորդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի իրավունք ունեցող անձը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեգիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջացել են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անհատական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայից, և պարտապահանջը, որի հիման վրա վճարվում են տոկոսները, իրոք վերաբերում է նման մշտական ներկայացուցչությանը կամ մշտական բազային: Այդ դեպքում, հանգանակներից կախված, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

6. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող պետությունում, եթե վճարողն ինքը պետությունն է, նրա վարչաքաղաքական ստորաբաժանումը, իշխանության տեղական մարմինները կամ այդ Պետության ռեգիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ այն բանից, Պայմանավորվող պետության ռեգիդենտ է նա, թե ոչ, մշտական ներկայացուցչություն կամ մշտական բազա ունի Պայմանավորվող պետությունում, որոնց գործունեության

արդյունքում ստեղծվել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդպիսի տոկոսների վճարման ծախսները կրում է այդպիսի մշտական ներկայացուցչությունը կամ մշտական բազան, ապա համարվում է, որ այդ տոկոսները առաջանում են այն Պետությունում, որտեղ գտնվում են մշտական ներկայացուցչությունը կամ մշտական բազան:

7. Եթե վճարողի և տոկոսների փաստացի իրավունք ունեցող անձի միջև կամ նրանց երկուսի և որևէ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող տոկոսների գումարը, որի հիման վրա դրանք վճարվում են, գերազանցում է այն գումարը, որը կիամաձայնեցվեր վճարողի և այդ տոկոսները ստանալու փաստացի իրավունք ունեցող անձի միջև, նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն տոկոսների՝ վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այս դեպքում վճարի ավելցուկային մասը առաջվա պես ենթակա է հարկման Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի մյուս դրույթները:

Հոդված 12 Ոոյալթի

1. Մի Պայմանավորվող պետությունում առաջացած և մյուս Պայմանավորվող պետության ռեգիստրացիան վճարված ռոյալթին հարկվում է միայն այդ մյուս պետությունում, եթե այդպիսի ռեգիստրացիան այդ ռոյալթի փաստացի իրավունք ունի:

2. «Ռոյալթ» տերմինը սույն Համաձայնագրում օգտագործվելիս նշանակում է որպես փոխհատուցում ստացված ցանկացած տեսակի վճարում գրականության, արվեստի կամ գիտության ստեղծագործությունների (ներառյալ կինոնկարները, ռադիո կամ հեռուստատեսային հաղորդումների համար օգտագործվող ցանկացած նկարը կամ ժապավենը), ցանկացած արտոնագրերի, ապրանքային նշանների, դիզայնի կամ նորենների, պլանների, գաղտնի բանաձևի կամ գործընթացի օգտագործման կամ ցանկացած հեղինակային իրավունքների օգտագործման իրավունքի տրամադրման դիմաց, կամ արդյունաբերական, առևտության, գիտական փորձի վերաբերյալ տեղեկատվության («նոու-հաու») կամ օգտագործելու համար:

3. Սույն հոդվածի առաջին կետի դրույթները չեն կիրառվում, եթե այդ ռոյալթի փաստացի իրավունք ունեցող անձը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեգիստրացիան գործունեություն է իրականացնում ռոյալթի առաջացման մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական

ԱԵՐԿԱՅԱԳՈՒՇՈՒԹՅԱՆ միջոցով կամ անկախ անհատական ծառայություններ է մատուցում այդ մյուս **ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝** այնտեղ գտնվող մշտական բազայից, և իրավունքը կամ գույքը, որի նկատմամբ վճարվում է ռոյալթին, իրոք կապված է այդ մշտական ԱԵՐԿԱՅԱԳՈՒՇՈՒԹՅԱՆ կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ և 14-րդ հոդվածների դրույթները:

4. Եթե վճարողի և ռոյալթի փաստացի իրավունք ունեցող անձի միջև կամ նրանց երկուսի և որևէ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով ռոյալթի գումարը, որը վերաբերում է օգտագործմանը, իրավունքին կամ տեղեկատվությանը, գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և ռոյալթի փաստացի իրավունք ունեցող անձի միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջին հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարի ավելցուկային մասն առաջվա պես ենթակա է հարկման **Պայմանավորվող** պետություններից յուրաքանչյուրի օրենսդրության համապատասխան՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները:

Հոդված 13 Եկամուտներ գույքի օտարումից

1. Մի **Պայմանավորվող** պետության ռեգիդենտի՝ մյուս **Պայմանավորվող** պետությունում գտնվող՝ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածում սահմանված անշարժ գույքի օտարումից ստացած եկամուտները կարող են հարկվել այդ մյուս **Պետությունում:**

2. Մի **Պայմանավորվող** պետության ռեգիդենտի եկամուտները՝ ստացած՝

ա) բաժնետոմսերից, որոնք ուղղակի կամ միջնորդաբար իրենց արժեքը կամ արժեքի մեջ մասը ստանում են մյուս **Պայմանավորվող** պետությունում գտնվող անշարժ գույքից, կամ

բ) գործընկերության բաժիններից, որոնց ակտիվները մեծամասամբ կազմված են մյուս **Պայմանավորվող** պետությունում գտնվող անշարժ գույքից, կամ ինչպես վերը՝ «ա» ենթակետում սահմանված բաժնետոմսերից, որոնք կարող են հարկվել այդ մյուս **Պայմանավորվող** պետությունում:

3. Մի **Պայմանավորվող** պետության ձեռնարկության՝ մյուս **Պայմանավորվող** պետությունում ունեցած մշտական ԱԵՐԿԱՅԱԳՈՒՇՈՒԹՅԱՆ առևտրային գույքի մաս կազմող շարժական գույքի կամ **Պայմանավորվող** պետության ռեգիդենտին մյուս **Պայմանավորվող** պետությունում կանոնավոր մատչելի մշտական բազային անկախ անհատական ծառայություններ մատուցելու

նպատակներին վերաբերվող շարժական գույքի օտարումից եկամուտները, ներառյալ այդպիսի մշտական ներկայացուցչության (առանձին կամ ամբողջ ծերնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի մշտական բազայի օտարումից ստացված եկամուտները, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

4. Պայմանավորվող պետության ռեգիլենտի կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, պետային նավերի կամ օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների կամ այդպիսի նավերի և փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերվող շարժական գույքի օտարումից ստացված եկամուտները հարկվում են միայն այդ Պայմանավորվող պետությունում:

5. Ցանկացած գույքի օտարումից ստացված եկամուտները, ի տարբերություն սույն հոդվածի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ կետերում նշված գույքի, հարկվում են միայն այն Պայմանավորվող պետությունում, ում ռեգիլենտն է հանդիսանում գույքն օտարող անձը:

Հոդված 14 Եկամուտներ անկախ անհատական ծառայություններից

1. Եկամուտը, որը ստանում է Պայմանավորվող պետության ռեգիլենտը մասնագիտական ծառայությունների մատուցումից կամ այլ անկախ բնույթի գործունեությունից, հարկվում է միայն այդ Պետությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ նա այդ գործունեությունն իրականացնելու նպատակով մյուս Պայմանավորվող պետությունում ունի կանոնավոր մատչելի մշտական բազա: Եթե նա այդպիսի մշտական բազա ունի, ապա եկամուտը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այդ մշտական բազային վերաբրվող եկամտի մասով:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, մասնավորապես, անկախ գիտական, գրական, դերասանական, գեղարվեստական, կրթական կամ դասախոսական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, փաստաբանների, ճարտարագետների, ճարտարապետների, ատամնաբույժների, հաշվապահների, հաշվեքննիչների (առողջապետությունների) անկախ գործունեությունը:

Հոդված 15 Եկամուտներ վարձու աշխատանքից

1. Հաշվի առնելով սույն Համաձայնագրի 16-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ հոդվածների դրույթները՝ աշխատավարձը և նման այլ վարձատրությունները, որոնք մի Պայմանավորվող պետության

ռեգիդենտն ստանում է վարձու աշխատանքի դիմաց, հարկվում են միայն այդ Պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող պետությունում: Եթե վարձու աշխատանքն իրականացվում է մյուս Պայմանավորվող պետությունում, ապա այդ կապակցությամբ ստացված վարձատրությունները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Անկախ սույն հոդվածի առաջին կետի դրույթներից՝ մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը հարկվում է միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե՝

ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում օրացուցային տարվա ընթացքում ամբողջությամբ վերցրած 183 օրացուցային օր կազմող ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները չգերազանցող ժամկետում,

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեգիդենտ չհանդիսացող վարձողի կողմից կամ նրա անունից,

գ) վարձատրություն կատարելու ծախսերը չի կրում մշտական ներկայացուցչությունը կամ մշտական բազան, որը մյուս Պետությունում ունի վարձողը:

3. Չնայած սույն հոդվածի առաջին և երկրորդ դրույթներին՝

ա) միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային, օդային կամ գետային նավում, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը կարող է հարկվել այն Պայմանավորվող պետությունում, որի ռեգիդենտն է հանդիսանում այդ նավերը կամ փոխադրամիջոցները շահագործող անձը,

բ) մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի՝ մյուս Պայմանավորվող պետությունում մշտական ներկայացուցչություն չփականացվող օբյեկտներում կատարած վարձու աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը կամ եկամուտը հարկվում է միայն առաջինը հիշատակված Պետությունում:

Հոդված 16 Տնօրենների հոնորարներ

Տնօրենների հոնորարները և մյուս նմանատիպ վճարումները, որոնք ստանում է մի Պայմանավորվող պետության ռեգիդենտը՝ որպես մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ հանդիսացող ընկերակցության տնօրենների խորհրդի կամ այլ համանման ղեկավար մարմնի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 17

Արվեստի աշխատողների և մարզիկների եկամուտներ

1. Անկախ սույն Համաձայնագրի 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներից՝ եկամուտը, որը ստանում է մի Պայմանավորվող պետության ռեգիստր որպես արվեստի աշխատող (թատրոնի, կինոյի, ռադիոյի, հեռուստատեսության դերասան, երաժիշտ կամ մարզիկ) մյուս Պայմանավորվող պետությունում կատարած իր անհատական գործունեությունից, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե արվեստի աշխատողի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անհատական գործունեությունից առաջացած եկամուտը հաշվանցվում է ոչ թե արվեստի աշխատողին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Համաձայնագրի 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին, հարկվում է այն Պետությունում, որտեղ իրականացվում է այդ արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունը:

3. Չնայած սույն հոդվածի առաջին և երկրորդ կետերի դրույթներին՝ Պայմանավորվող պետությունում արվեստի աշխատողի կամ մարզիկի գործունեությունից ստացվող եկամուտն այդ Պետությունում ազատվում է հարկումից, եթե այդ գործունեությունը ֆինանսավորվում է որևէ Պայմանավորվող պետության հասարակական իիմնադրամի միջոցով, կամ եթե այդ գործունեությունը իրականացվում է Պայմանավորվող պետությունների միջև կմքված մշակույթի համագործակցության վերաբերյալ Համաձայնագրի շրջանակներում:

Հոդված 18 Կենսաթոշակներ

Պայմանավորվող պետության կողմից ֆիզիկական անձին վճարվող կենսաթոշակները և սոցիալական ապահովագրման այլ վճարումները՝ կապված նրա նախկին վարձու աշխատանքի հետ, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

Հոդված 19 Պետական ծառայություն

1. Պայմանավորվող պետության, նրա վարչաքաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմինների կողմից ոչ կենսաթոշակի ձևով վճարված վարձատրումը որևէ ֆիզիկական անձին, այդ Պետությանը, նրա վարչաքաղաքական ստորաբաժանմանը կամ իշխանության տեղական մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց, հարկվում է միայն այդ

Պետությունում: Սակայն այդպիսի վարձատրումը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող պետությունում, եթե ծառայությունն իրականացվում է տվյալ Պետությունում, և ֆիզիկական անձը հանդիսանում է տվյալ Պետության ռեգիդենտ, որը՝

- ա) հանդիսանում է տվյալ Պետության ազգային անձ, կամ
- բ) տվյալ Պետության ռեգիդենտ չի դարձել միայն ծառայություն իրականացնելու նպատակով:

2. Սույն Համաձայնագրի 15-րդ և 16-րդ հոդվածների դրույթները կվիրավեն այն ծառայության վարձատրության նկատմամբ, որի իրականացումը կապված է Պայմանավորվող պետության, նրա վարչաքաղաքական ստորաբաժանման կամ իշխանության տեղական մարմինների կողմից իրականացվող առևտրային գործունեության հետ:

Հոդված 20 Ուսանողներ

1. Մինչև մի Պայմանավորվող պետություն անմիջական ժամանելը մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ հանդիսացած կամ այդպիսին հանդիսացող և բացառապես ուսում և կրթություն ստանալու նպատակով առաջինը հիշատակված Պետությունում գտնվող ուսանողի, պրակտիկանտի կամ փորձնակի կողմից ստացվող՝ ապրելու, ուսանելու և կրթություն ստանալու համար նախատեսված վճարները առաջինը հիշատակված Պետությունում չեն հարկվում, եթե այդ վճարումների աղբյուրները գտնվում են այդ Պետության սահմաններից դուրս:

2. Մինչև մի Պայմանավորվող պետություն անմիջական ժամանելը մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտ հանդիսացած կամ այդպիսին հանդիսացող և բացառապես ուսում և կրթություն ստանալու նպատակով առաջինը հիշատակված Պետությունում գտնվող ուսանողի, պրակտիկանտի կամ փորձնակի կողմից ստացվող եկամուտը առաջինը հիշատակված Պետությունում ենթակա չէ հարկման, եթե այն ստացված է այդ Պայմանավորվող պետությունում իրականացվող գործունեությունից:

ա) ուսանողի առնչությամբ՝ այդ Պայմանավորվող պետություն ժամանելու օրվանից սկսած՝ ուսման համար անհրաժեշտ, մեկը մյուսին հաջորդող, բայց 5 տարին չգերազանցող ժամանակաշրջանի ընթացքում,

բ) պրակտիկանտի կամ փորձնակի առնչությամբ՝ այդ Պայմանավորվող պետություն ժամանելու օրվանից սկսած՝ 12-ամսյա ժամանակաշրջանի ընթացքում:

Հոդված 21 Այլ եկամուտներ

1. Պայմանավորվող պետության ռեգիդենտի Եկամուտների՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չիշատակված տեսակները, անկախ նրանց ծագման աղբյուրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Սույն հոդվածի առաջին կետի դրույթները չեն կիրառվում այլ Եկամուտների նկատմամբ, քան 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից Եկամուտն է, եթե այդպիսի Եկամուտներ ստացողը մի Պայմանավորվող պետության ռեգիդենտ է և ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում այնտեղ գտնվող մշտական ներկայացուցչության միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անհատական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող մշտական բազայից, և գույքը կամ իրավունքը, որի հետ կապված վճարվել է Եկամուտը, իրոք կապված են այդպիսի մշտական ներկայացուցչության կամ մշտական բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգանանքներից, կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ կամ 14-րդ հոդվածների դրույթները:

Հոդված 22

Գույք

1. Մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի գույքը, որը ներկայացված է որպես անշարժ գույք՝ ըստ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի, և գտնվում է մյուս Պայմանավորվող պետությունում, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի գույքը, որը ներկայացված է որպես այդ Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական ներկայացուցչության առևտրային գույքի մաս հանդիսացող շարժական գույք կամ այդ Պայմանավորվող պետության ռեգիդենտին մյուս Պայմանավորվող պետությունում անկախ անհատական ծառայություններ մատուցելու նպատակով մատչելի մշտական բազային վերաբերող շարժական գույք, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Մի Պայմանավորվող պետության ռեգիդենտի գույքը, որը ներկայացված է որպես միջազգային փոխադրումներուն շահագործվող ծովային, գետային նավեր, օդանավեր, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցներ կամ այդպիսի նավերի և փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույք, հարկվում է միայն այդ Պետությունում:

4. Գլխավորապես մի Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքից կազմված գույք ունեցող ընկերակցության

բաժնետոմսերի կամ այլ կորպորատիվ իրավունքների ձևով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ Պայմանավորվող պետությունում:

5. Պայմանավորվող պետության ռեգիստրացիայի գույքի մյուս բոլոր տարրերը հարկվում են միայն այդ Պետությունում:

Հոդված 23 Կրկնակի հարկման բացառումը

1. Հաշվի առնելով Ուկրաինայի օրենսդրության դրույթները՝ Ուկրաինայի սահմաններից դուրս գտնվող տարածքում վճարված հարկից ազատման վերաբերյալ (որոնք չեն հակասի սույն կետի գիշավոր սկզբունքներին), Հայաստանի օրենսդրությամբ և սույն Համաձայնագրին համապատասխան, Հայաստանի աղբյուրներից ուղղակի կամ հարկման ենթակա շահույթից, Եկամուտներից կամ գույքից հատկացման ձևնապարհով վճարվող հայկական հարկի վրա վարկի ձևով գեղջում կկատարվի նույն շահույթի, Եկամուտի կամ գույքի վերաբերյալ հաշվարկված որևէ ուկրաինական հարկի դիմաց:

2. Հայաստանի առնչությամբ կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ՝

Եթե Հայաստանի ռեգիստրացիա Եկամուտ է ստանում կամ տնօրինում է գույք, որը, սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել Ուկրաինայում, Հայաստանը թույլ կտա՝

ա) այդ ռեգիստրացիա Եկամուտահարկից հանել Ուկրաինայում վճարված Եկամուտահարկին հավասար գումար,

բ) այդ ռեգիստրացիա գույքահարկից հանել Ուկրաինայում վճարված գույքահարկին հավասար գումար:

3. Այդպիսի հանումները, ցանկացած դեպքում, կախված հանգամանքներից, չպետք է գերազանցեն Եկամուտահարկի կամ գույքահարկի մինչև այդ մյուս Պետությունում հարկման ենթակա Եկամուտին կամ գույքին վերաբերող հանման տրամադրումը հաշվարկված նասը:

Հոդված 24 Անխտրականություն

1. Մի Պայմանավորվող պետության ազգային անձինք մյուս Պայմանավորվող պետությունում չպետք է ենթարկվեն որևէ հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, որն այլ է կամ ավելի ծանր է, քան այն հարկումն ու պարտավորությունների կատարումը, որին ենթակա են կամ կարող են ենթակա լինել նման հանգամանքներում այդ մյուս Պետության ազգային անձինք:

2. Պայմանավորվող պետություններից որևէ մեկի ռեգիդենտ համարվող, քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող պետություններից ոչ մեկում չեն Ենթարկվի որևէ հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, որն այլ է կամ ավելի ծանր է, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունների կատարումը, որին Ենթակա են կամ նման հանգամանքներում կարող են Ենթակա լինել այդ մյուս Պետության քաղաքացիները:

3. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած նշտական ներկայացուցչության հարկումը չի կարող այդ մյուս Պետությունում պակաս բարենպաստ լինել, քան այդ մյուս Պետությունում նույնատիպ գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը: Այս դրույթը չպետք է մեկնաբանվի որպես մի Պայմանավորվող պետությանը՝ մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտներին հարկային անհատական արտոնություններ, պահումներ և զեղչեր շնորհել պարտավորեցնող, որոնք այդ մյուս Պետությունը տրամադրում է սեփական ռեգիդենտներին՝ նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի առաջին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կամ 12-րդ հոդվածի 4-րդ կետի դրույթները, տոկոսները, ռոյալթին և մի Պայմանավորվող պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին կատարած այլ վճարումները, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով պետք է հաշվառվեն նույն պայմաններով, որոնց հանաձայն դրանք կվճարվեին առաջինը նշված Պետության ռեգիդենտին: Նմանապես, մի Պայմանավորվող պետության ձեռնարկության ցանկացած պարտք մյուս Պայմանավորվող պետության ռեգիդենտին, այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով, պետք է Ենթակա լինի հանման նույն պայմաններով, ինչպես եթե այն պարտք լիներ առաջինը նշված Պետության ռեգիդենտին:

5. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկությունը, որի գույքը ամբողջովին կամ մասամբ պատկանում, ուղղակի կամ անուղղակի վերահսկվում է մյուս Պայմանավորվող պետության մեկ կամ մի քանի ռեգիդենտների կողմից, առաջինը նշված Պետությունում չպետք է Ենթարկվի որևէ հարկման կամ դրա հետ կապված ցանկացած պարտավորությունների կատարման, որն այլ է կամ ավելի ծանր է, քան այն հարկումն կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարումը, որին Ենթակա են կամ կարող են Ենթակա լինել առաջինը նշված Պետության՝ նման այլ ձեռնարկությունները:

Հոդված 25

Փոխհամաձայնեցման արարողակարգը

1. Եթե անձը համարում է, որ Պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կիանգեցնեն նրա՝ սույն Համաձայնագրին ոչ համապատասխան հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, իր գործը ներկայացնել այն Պայմանավորվող պետության իրավասու մարմնի քննարկմանը, ում ռեզիլենտն է հանդիսանում, կամ եթե նրա դեպքն ընկնում է սույն Համաձայնագրի 24-րդ հոդվածի 1-ին կետի տակ, այն պետության, ում ազգային անձն է հանդիսանում: Դիմումը պետք է ներկայացվի Համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման բերող գործողության մասին առաջին հիշատակման պահից երեք տարվա ընթացքում:

2. Իրավասու մարմինը դիմումը հիմնավորված համարելու կամ գոհացուցիչ որոշման ինքնուրույն հանգելու ի վիճակի չինելու դեպքում կծութի հարցը լուծել մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ՝ նպատակ ունենալով բացառել սույն Համաձայնագրին ոչ համապատասխան հարկումը: Ցանկացած ձեռք բերված համաձայնություն պետք է կատարվի անկախ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսվող ժամանակային սահմանափակումից:

3. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները, փոխադարձ համաձայնությամբ, կծութեն լուծել Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ժամանակ առաջացող բոլոր դժվարություններն ու կասկածները: Նրանք կարող են նաև, սույն Համաձայնագրով չնախատեսված դեպքերում, խորհրդակցել կրկնակի հարկումը բացառելու նպատակով:

4. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները կարող են անմիջական կապ հաստատել միմյանց հետ՝ նախորդ կետերի ըմբռնման մեջ համաձայնության հասնելու նպատակով:

Հոդված 26

Տեղեկության փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները, սույն Համաձայնագրի կամ Պայմանավորվող պետությունների ներքին օրենսդրության դրույթների իրագործման համար, անհրաժեշտ տեղեկություն կփոխանակեն այն հարկերի վերաբերյալ, որոնց վրա տարածվում է սույն Համաձայնագիրը, այն չափով, որքանով հարկումը չի հակասում Համաձայնագրին, մասնավորապես, հարկերի վճարումից խուսափումը կանխելու համար: Տեղեկության փոխանակումը սույն

Համաձայնագրի առաջին հոդվածով չի սահմանափակվում: Պայմանավորվող պետության ստացած ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի նույն կերպ, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրության շրջանակներում ստացված տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք գրադարձ են Համաձայնագրով ընդգրկվող հարկերը գնահատելով կամ գանձելով, հարկադիր բռնագանձումով կամ դատական հետապնդումով կամ բողոքարկումների քննումով: Այդպիսի անձինք կամ մարմինները ստացած տեղեկությունը պետք է օգտագործեն միայն այդ նպատակների համար: Նրանք կարող են այդ տեղեկությունը հրապարակել դատական բաց նիստի ընթացքում կամ իրավաբանական որոշումներ կայացնելիս:

2. Սույն հոդվածի առաջին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն մեկնաբանվի որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնելու Պայմանավորվող պետություններից որևէ մեկի օրենքների կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնել տեղեկություն, որը հնարավոր չէ ստանալ Պայմանավորվող պետություններից որևէ մեկի օրենսդրության կամ սովորական վարչական գործավարության ընթացքի համաձայն,

գ) ներկայացնել որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք, առևտրական գործընթաց կամ տեղեկություն, որի բացահայտումը կհակասեր սահմանված գործավարությանը:

Հոդված 27 Աջակցություն հարկերի գանձման գործում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները պարտավորվում են միջյանց օգնել և աջակցել սույն Համաձայնագիրը ներառող հարկերի, ներառյալ հարկային օրենսդրությունը խախտելու համար նախատեսող տոկոսների, տույժերի և տուգանքների, գանձման գործում:

2. Պայմանավորվող պետության իրավասու մարմնի հարցում՝ այդպիսի հարկերի գանձման գործում աջակցելու համար, պետք է ընդգրկի այնպիսի լիազորություններով օժտած վկայականի հանձնումը, որ այդ Պետության օրենքների համաձայն, այդ հարկերը համարվեին վերջնականապես որոշված: Սույն հոդվածի նպատակների համար հարկը համարվում է վերջնականապես որոշված, երբ Պայմանավորվող պետությունը իրավունք ունի,

սեփական ներքին օրենսդրության համաձայն, գանձել հարկերը, իսկ հարկատուն չունի այդ գանձումը կասեցնելու հետագա իրավունք:

3. Պայմանավորվող պետության՝ մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնի կողմից ընդունված հարցումը կկատարվի այդ մյուս Պետության կողմից այնպես, ինչպես կկատարվեր սեփական հարկերի վերաբերյալ հարցումը:

4. Սույն հոդվածի համաձայն՝ մի Պայմանավորվող պետության իրավասու մարմնի գանձած գումարները պետք է փոխանցվեն մյուս Պայմանավորվող պետության իրավասու մարմնին: Ըստ որում, եթե Պայմանավորվող պետության իրավասու մարմինները չեն գա այլ համաձայնության, ապա գանձման ժամանակ օգնության ապահովման սովորական ծախսերը կլիի առաջինը հիշված Պետությունը:

5. Ըստ սույն հոդվածի պայմանների՝ եթե հարկերի գանձումը վերաբերում է մի ժամանակաշրջանի, որի ընթացքում հարկատուն հանդիսացել է մյուս Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ապա հարկերի գանձման գործում ոչ մի օգնություն չի ցուցաբերվի:

6. Սույն հոդվածում ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետություններից որևէ մեկին սեփական հարկերի գանձման ժամանակ օգտագործվող միջոցներից տարբեր միջոցների կիրառման կամ հասարակական քաղաքականությանը (հասարակարգին) հակասող պարտավորությունների հանձնարարական:

Հոդված 28

Դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական ծառայությունների անդամներ

Սույն Համաձայնագրում ոչինչ չի ազդի դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական ծառայությունների անդամներին միջազգային իրավունքի նորմերի կամ հատուկ համաձայնագրերի հիման վրա տրամադրված հարկային արտոնությունների վրա:

Հոդված 29

Ուժի մեջ մտնելը

1. Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը դիվանագիտական ուղիներով մյուսին կտեղեկացնի սույն Համաձայնագրի՝ ազգային օրենսդրությանը համապատասխան ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ընթացակարգերը ավարտելու մասին: Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այդպիսի ծանուցումներից վերջինի օրը, և նրա դրույթները ուժի մեջ կլինեն՝

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից սկսած՝ վճարված գումարների նկատմամբ,

բ) Եկամուտներից գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից սկսվող հարկման ժամանակաշրջանների համար,

գ) գույքահարկերի առնչությամբ՝ Համաձայնագիրը ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից սկսվող հարկման ժամանակաշրջանների դրությամբ գոյություն ունեցող գույքի վրա:

Հոդված 30 Գործողության դադարեցումը

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մնում մինչև Պայմանավորվող պետություններից որևէ մեկի կողմից դրա գործողության դադարեցումը: Պայմանավորվող պետություններից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել Համաձայնագրի գործողությունը դրա ուժի մեջ մտնելու պահից 5 տարի անցնելուց հետո՝ ցանկացած օրացուցային տարվա ավարտից առնվազն 6 ամիս առաջ, դիվանագիտական ուղիներով ծանուցելով դրա գործողության դադարեցման մասին:

Այդ դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է՝

ա) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից սկսած՝ վճարված գումարների նկատմամբ.

բ) Եկամուտներից գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ից սկսվող հարկման ժամանակաշրջանների համար.

գ) գույքահարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ի դրությամբ գոյություն ունեցող գույքի վրա:

Ի վկայություն որի՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում 1996 թվականի մայիսի 14-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, ուկրաիներեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարագոր են:

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման ժամանակ տարածայնությունների դեպքում կգերակայի ռուսերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1996 թվականի հոկտեմբերի 24-ից: